

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

2021 թվականի ապրիլի 30-ին, ժամը 19.00-ին, Երևանի քաղաքապետարանում՝ Երևանի Արգիշտի 1 հասցեում, տեղի ունեցավ Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2-րդ նիստը, որին Խորհրդի 20 անդամներից մասնակցում էին 14-ը:

Նիստը վարում էր Խորհրդի նախագահի տեղակալ Գայանե Մելքոն Մելքոնյանը:

Նիստի օրակարգի 1-ին կետի համաձայն՝ քննարկվեց Խորհրդի աշխատակարգի վերաբերյալ հարցը: Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը պարզաբանումներ ներկայացրեց Երևանի ավագանու 2013 թվականի N 46-Ն որոշմամբ հաստատված «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգի» (այսուհետ՝ Կարգ) վերաբերյալ: Խորհրդի անդամներից մի քանիսը հանդես եկան առաջարկությամբ՝ Խորհրդի նիստերի անցկացման պարբերականությունը սահմանելու վերաբերյալ: Քննարկման արդյունքում համաձայնություն ձեռք բերվեց նիստերն անցկացնել ամենամյա պարբերականությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրել արտահերթ նիստ: Առաջարկվեց նաև Խորհրդի նիստի օրակարգը նախապես ներկայացնել Խորհրդի անդամներին՝ առաջարկություններ և կարծիքներ ստանալու նպատակով, ինչն արժանացավ ներկաների հավանությանը: Քննարկման ժամանակ Խորհրդի անդամ Տիգրան Ավագյանը հանդես եկավ խնդրանքով՝ օրակարգի ավարտին իրեն տրամադրել հինգ րոպե ժամանակ հարց բարձրացնելու համար, ինչը բավարարվեց:

Նիստի օրակարգի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ Խորհրդի քարտուղար Գրիգոր Երիցյանը ներկայացրեց Երևան համայնքի երիտասարդների զբաղվածությունը խթանող «Աշխատանք երիտասարդներին» ամենամյա աշխատանքային տոնավաճառ միջոցառման տեխնիկական բնութագրի նախնական տարբերակը, ինչի վերաբերյալ ծավալված բուռն քննարկման արդյունքում, ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ միջոցառման կազմակերպման և անցկացման վերաբերյալ Խորհրդի բոլոր անդամների կողմից

կներկայացվեն առաջարկություններ՝ էլեկտրոնային եղանակով, որոնք հաշվի կառնվեն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի կողմից՝ միջոցառման տեխնիկական բնութագրի վերջնական տարբերակի մշակման ժամանակ:

Նիստի օրակարգի 4-րդ կետի համաձայն՝ քննարկվեց Հայաստանի Հանրապետության պետական երիտասարդական քաղաքականության՝ 2021-2025 թվականների ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակմանը Խորհրդի մասնակցության ֆորմատի հարցն, ինչի արդյունքում որոշվեց մինչև 2021 թվականի մայիսի 10-ը Խորհրդի քարտուղարին ներկայացնել Ռազմավարության վերաբերյալ առաջարկություններ և կարծիքներ, որոնց հիման վրա կկազմվի միասնական փաստաթուղթ և կներկայացվի Խորհրդի անունից:

Խորհրդի նիստի օրակարգը սպառելուց հետո, ձայնի իրավունքը տրվեց Խորհրդի անդամ Տիգրան Ավագյանին՝ իր կողմից նախանշված հարցերը բարձրաձայնելու նպատակով: Հարցերից մեկը վերաբերում էր տրանսպորտի ոլորտին, իսկ հաջորդ հարցն առավելապես իր մեջ պահանջ էր ներառում՝ ապահովել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ստորոբաժանումների ղեկավարների ներկայությունը Խորհրդի նիստերի աշխատանքներին: Ի պատասխան, Խորհրդի նախագահի տեղակալն ու քարտուղարը պարզաբանեցին, որ Խորհրդի գործունեության ոլորտը սահմանափակվում է երիտասարդության հարցերի բնագավառով և նշված հարցերի քննարկումը դուրս է տվյալ Խորհրդի շրջանակներից: Իսկ Խորհրդի անդամ՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետի տեղակալ Ռաֆֆի Գյոզայանը Տ.Ավագյանին առաջարկեց Խորհրդի իրավասության սահմաններից դուրս հարցերի պատասխանները ստանալու համար, օրենքով սահմանված կարգով՝ գրավոր կամ առցանց եղանակով դիմել Երևանի քաղաքապետարան:

Նիստի ավարտին պայմանավորվածություն ձեռք բերվեց հաջորդ նիստը գումարել 2021 թվականի մայիսի 20-ին:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ